

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Երրորդություն Հայց. Առաք. Եկեղեցույ Ծխական Խորհուրդը կու գայ հաճոյքով տեղեկացնելու որ Երկուշաբթի, Սոյեմբեր 19, 2007-ին եկեղեցույս Հովիւ՝ Արժ. Տէր Զարեհ Ա. Քինյ. Չարգարեան յաջողութեամբ աւարտեց իր ուսումնական դասընթացները Թորոնթոյի Համալսարանի հովանիին տակ գտնուող, Սբ. Օգոստինոս Կաթողիկէ Ճեմարանէն ներս, արժանանալով Աստուածաբանութեան Մագիստրոսի կոչման (Master of Theological Studies).

Շրջանաւարտներու հանդէսը տեղի ունեցաւ Սբ. Օգոստինոս Կաթողիկէ Ճեմարանի տաճարին մէջ, որուն ներկայ էին -

Թորոնթոյի Կաթողիկէ Եկեղեցույ Առաջնորդ՝ Արքեպիսկոպոս Թովմաս Քրիստոֆըր Քոլինզը,

Փրոֆ. Էտիթ Հիլան՝ Վերատեսուչ Թորոնթոյի Համալսարանի Ակադեմիայի,

Հոգշ. Տէր Ռոպըրթ Նասկա՝ Նախագահ եւ Տեսուչ Սբ. Օգոստինոս Ճեմարանի,

Ներկայ էին նաեւ բարձրաստիճան այլ հոգեւորականներ եւ Թորոնթոյի Համալսարանի դասախօսներ, Գանատահայոց Թեմական Խորհուրդի յարգարժան Ատենապետ՝ Տիար Արա Պոյաճեան, Սբ. Երրորդություն Հայց. Առաք. Եկեղեցույ Ծխական Խորհուրդի յարգարժան Ատենապետ՝ Տիար Աւետիս Էվրան, Ծխական Խորհուրդի ներկայացուցիչներ՝ Տիկին Սոնա Սէլեան եւ Տիարք Սարգիս Սահակեան եւ ճոն Սաթուրի, ինչպէս նաեւ Եկեղեցույ աշխատակցուհի Տիկ. Անի Սարվարեան:

Այսու, Ծխական Խորհուրդը յանուն Ս. Երրորդություն Հայց. Առաք. Եկեղեցույ հաւատացեալներու, այս փայլուն յաջողութեան առիթով, կու գայ շնորհաւորել Արժ. Տէր Զարեհ Աւագ Քինյ. Չարգարեանը ինչպէս նաեւ Երէցկին Նայիրան եւ իրենց զուակները՝ Նարէկը, Արէնը եւ Արագը, որոնք նաեւ ներկայ գտնուեցան այս հանդիսութեան:

Յաւարտ վկայականաց բաշխման, Տէր Զարեհ եւ բոլոր իր հիւրերը հաւաքուեցան եկեղեցույ մէջ, շնորհակալութիւն յայտնելու Տիրոջ, իր այս օրհնութեան համար:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, շրջանաւարտներուն եւ իրենց հիւրերուն համար:

Ծխական Խորհուրդ
Սբ. Երրորդություն Հայց. Առաք. Եկեղեցույ